կրայ աւազս և այլ գոյացութիւնս, որք իւրեանց եռացմամբն պատճառեն նուազ կամ առաւել ջերմութիւն, և որոց ազդեցութիւնն տևէ կրկին ջերմութեամբ, այսինքն երկրի կարգի ծոցն վերստին ածելով ձիոյ գոմից դուրս բերած, աղբ՝ երկրի զարգացման կարևորութեան չափով. 3° կարեն վերստին ամրացուցանել երկրի մակերևոյթն ածխափոշեաւ, աղբահողով և այլ այնպիսի գոյացութեամբք՝ որք իւրեանց բաժանմամբն և իւրեանց սև և նսեմ գունիւն բարձրաստիճան ժառանգեն արեգական ճառագայթքս ծծելոյ կարողութիւն:

(Շարունակելի)

Թ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՐԵՄԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ

ՃԵՄԱՐԱՆ.

Ճեմարանի կիսոյ մասին այրման գուժն ընդ ամենայն տեղ և համայն ողջամիտ Հայոց սրտից վերայ տխուր տպաւորութիւն և տրտմութիւն ներգործելով՝ բայց ոչ վհատութիւն, շատ տեղերէն անընդհատ մխիթարական թուղթեր կուգուին առ Վ.եհ. Հայրապետ մեր՝ և խոստանան միանգամայն՝ զի ինքեանք պատրաստ են ինչպէս միշտ և հանապազ եղած են ըստ ամենայնի՝ թէ նիւթապէս և թէ բարոյապէս օգնելոյ ամեն ազգօգուտ և բարեմիտ նպատակաց և ձեռնարկութեանց, նոյնպէս այս անգամ նպաստելոյ Ճեմարանի այրեցեալ մասին վերաշինութեան, և արդէն մի քանի կողմեր ստորագրութիւններ բացուած են (ի Բագու, յԱստրախան ևլն), և Աստրախանէն Հաճեան և Տ. որդ. Յովսէփ աւագ Քահանայ Բունիաթեանց՝ բաց ի իւր նուէրէն՝ յայլոց ևս առձեռն հաւաքելով՝ մատուցած է Վ.եհ. Հայրապետին:

Թողլով զի՝ ի ժամանակին նուիրատուաց անուանքը և արդիւնքը կհրատարակուին, ու սակաւ մխիթարութեամբ կտեսնեմք և կուրախանամք ի սիրտ և ի հոգի՝ որ մեր սիրելի ազգայինք երբէք անտարբեր մնացած չեն Ազգի և Եկեղեցւոյ ներկայի և ապագային համար ձեռնարկուած և ձեռնարկուելիք բարեմիտ նպատակաց և հաստատութեանց նկատմամբ, և ահա այսպէս՝ երբ մի Ազգի և Եկեղեցւոյ մէջ համամիտ և ներդաշնակ անկեղծ սէր և ողջամիտ ջանք կտիրէ, ի դըրանց դժոխոց անյաղթահարելի կմնան և երջանիկ կլինին:

Հայեր, քաջ ճանաչեմք մեր հարազատ օգուտները և կարօտութիւնքը, և միշտ գործեմք առանց թուլանալոյ և վհատելոյ

Այս առթիւ կծանուցանեմք նաև՝ զի Ճեմարանի վերաշինութեան աշխատութիւնք մեծ փութով յառաջ կտարուին:

ՑՈՒՑԱԿ ՆՈՒԻՐԱՏՈՒԱՑ Ի ՆՊԱՍՏ ՇԻՆՈՒԹԵԱՆՑ ՄԱՑՐ ԱԹՈՌՈՅՍ

(Շարունակութիւն և վերջ)

Ի ՎԻՃԱԿԻՆ ԱՂԵՔՍԱՆԴՐԱՊՕԼՈՅ.

	Ռ.	Կ.
Որդնաւեցի Բաղտասար տէր Բաղտասարեանց.	4	
Նոյն գիւղացի Կարապետ Թումասեան.	2	
,, Ալլահվերդի Մալխասեան.	1	
,, Յօհաննէս Զաքարեան.	1	
,, Յօհաննէս Սարգսեան.	1	